2006 թ. Զեկույց

2006 թ. ընթացքում «Ապագան բաց է» հկ-ն ակտիվորեն հետամուտ է եղել տարաբնույթ միջոցառումների և ձեռնարկումների ընդլայնմանը, իր հիմնական նպատակը, այն է միավորել ՀՀ բոլոր մանկատները մեկ կրթական ցանցի մեջ, իրականացնելու ակնկալիքով: Հիրավի, ինքնին նպատակը մեծ ջանքեր ու ֆինանսական միջոցներ է պահանջում: Թեև հարկ է նշել, որ «Օգնել երեխաներին» ծրագիրը մինչ այժմ կարողացել է իր շուրջը հավաքել կամավորների հիմնական մի կազմ, որոնք հիմնականում ուսանողներ են և որոնք պատրաստ են իրենց գիտելիքները կիսել մանկատների և հատուկ դպրոցի երեխաների հետ մեծ ոգևորությամբ և նվիրումով և ոչ մի ջանք չեն խնայում նպաստելու ծրագրի հիմնական նպատակի իրագործմանը: Բայց նաև պետք է նշել, որ շատ կամավորներ հեռացել են հկ-ից, քանի որ նրանք չեն կարողացել վճարել նույնիսկ ճանապարհածախսը մանկատուն հասնելու համար: Այսպիսով, երկրորդ գործոնն է՝ ֆինանսական խնդիրները, հկ-ի Աքիլլեսյան գարշապարը:

2006 թ. հկ-ն մասնակցել է մի շարք միջոցառումների՝ փորձելով բարձրացնել հկ-ի գործնեության մասին մարդկանց իրազեկվածությունը: Ապրիլին այն մասնակցեց «Կրթություն և Կարիերա 2006» ցուցահանդեսին: Կամավորների ներդրված ջանքերի արդյունքում «Օգնել երեխաներին» ծրագիրը և երեխաների ձեռքի աշխատանքները ներկայացվեցին հանրությանը: Մեկ այլ միջոցառում, որը նույնպես նպատակ ուներ տեղեկացնել մարդկանց մանկատան երեխաների իրական վիճակի (կրթական ցածր մակարդակ) և այդ վիճակից նրանց դուրս բերելուն միտված կատարված աշխատանքի մասին, ծրագրի մայիսի 27-ին Մշակույթի տան տրվող զեկույցն էր: Ծրագրի ղեկավար Սամվել Մովսիսյանը, ամբիոնների պատասխանատուները և վեբկայքի պատասխանատու Ասյա Կոստանյանը ներկայացրեցին ծրագրի զարգացման ներկա փուլը, դժվարությունները, ձեռքբերումները, որոնք իրենց ավելի ու ավելի են ներշնչում և խթանում շարունակելու հանձն առնված առաքելությունը: Զեկույցի ընթացքում ներկայացվեց նաև «Ապագա Մասնագետներ» ծրագիրը, որը պետք է սկսվեր 2006թ սեպտեմբերին:.

Ծրագրի կրթական միջոցառումների կազմակերպումը չի սահմանափակվել միայն մանկատներում և հատուկ դպրոցներում: Ծրագրի աշխատակազմը, կարևորելով այն, որ այս երեխաները մեր երկրի ապագա քաղաքացիներն են լինելու և հետևաբար պետք է նաև

մասնակցեն հասարակական տարբեր իրադարձությունների, կազմակերպեց մի շարք այցելություններ: Ապրիլի 24-ին, Զատիկ մանկատան երեխաները, ծրագրի կամավորների ուղեկցությամբ այցելեցին Ծիծեռնակաբերդ և իրենց հարգանքի տուրքը մատուցեցին 1915 թ. Եղեռնագործության զոհերին: Այցից առաջ երեխաներին բացատրեցին Արևմտյան Հայաստանում կատարված պատմական ողբերգության մի շարք փաստեր: Մյուս այցի նպատակակետն էր Գավառի մանկատունը, որտեղ Զատիկ, Հատուկ տիպի մանկատների երեխաները, Վիվասել ընկերության ներկայացուցիչները, Հայաստանում Ամերիկյան համալսարանի և Եվրոպական համալսարանի ուսանողական խորհրդի մի շարք անդամներ հանդիպեցին մանկատան երեխաներին, միասին գեղեցիկ ժամանակ անցկացրեցին, երգեցին ու պարեցին՝ դրոշմելով երջանիկ ժպիտներ բոլորի դեմքերին: Ինչպես մանկատան տնօրեն Նիկոլայ Նալբանդյանը նկատեց «մինչև հիմա մանկատների երեխաների միջև փոխադարձ այցերի նախադեպ չէր եղել»: Այս այցի հաջողությունը կանխատեսեց նաև հետագա փոխադարձ ավանդական այցերի կազմակերպումը:

ՀԿ-ի գործնեությունը խոչընդոտող դժվարություններից է նաև այն հանգամանքը, որ որոշ մանկատներ և «ՍՕՍ» երեխաների գյուղը (որտեղ որբ երեխաներ են ապրում) հեռու են գտնվում Երևանից և մեծ խնդիր է նրանց մոտ հասնելը և կրթական ծրագրեր իրականացնելը: 2006 թ. մայիսին ծրագրի անձնակազմը Եվրոպական համալսարանի ուսանողների հետ միասին այցելեցին «ՍՕՍ» Երեխաների գյուղը: Բավականանին ուրախալի էր այն, որ գյուղում, ինչպես ՀՀ մնացած բոլոր մանկատներում հիանալի նյութական պայմաններ են ապահովված, մինչդեռ երեխաների կրթական մակարդակը շատ ցածր էր: Այսպիսով, ևս ութսուն երեխաներ միացան «Ապագան բաց է» հկ-ի կրթական մեծ ցանցին: